2024-2026ԹԹ. ՄԺԾԾ (ՆԵՐԱՌՅԱԼ 2024Թ.

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ)

ՀԱՅՏԻ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ

2024 ԹՎԱԿԱՆԻ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

Պետական մարմինը՝ ՀՀ ԿԵՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայտի հաստատման ամսաթիվը՝ **07.03.2023թ.**

1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Ծրագիր- **1096 - Ընտրական գործընթացների համակարգում, կանոնակարգում և տեղեկատվության տրամադրում**

Ծրագրի նպատակը- **Օրինական և թափանցիկ ընտրական գործընթացների կազմակերպում և ապահովում**

Վերջնական արդյունքի նկարագրությունը- **Ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանադրական կարգավիճակով օժտված անկախ պետական մարմին է, որը կազմակերպում է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ:Հանձնաժողովի աշխատանքներն ուղղված են ընտրական գործընթացների պատշաճ կազմակերպմանն ու անցկացմանը, դրանց բարելավմանն ու կատարելագործմանը, ընտրական իրավունքի և ընտրական գործընթացների վերաբերյալ ուսուցումների և դասընթացների կազմակերպմանը, դասավանդման նոր մեթոդաբանության, ուսուցման նոր հարթակների մշակմանն ու ներդրմանը և ընտրական գործընթացների վերաբերյալ հանրային իրազեկման ապահովմանն ու ընդլայնմանը: Հանձմաժողովը իրականցնում է Ընտրական գործընթացների համակարգում, նախապատրաստում, հաշվետվական համակարգի կազմակերպում, վերլուծություն, ընտրական պաշտոնների վերապատրաստում,քաղաքացիների դիմումների և բողոքների քննարկում:Հանձնաժողովը անդամակցում է Եվրոպայի ընտրական իշխանությունների ասոցիացիա (ACEEEO) կազմակերպությանը:

Հանձմաժողովը իրականցնում է մասնագիտական խորհրդատվության տրամադրում զանգվածային լրատվության միջոցներին, հասարակական կազմակերպություններին իրենց իրավունքների իրականացման հասանելիության ապահովման նպատակով; Համագործակցում է միջազգային կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների շրջանում ընտրական գործընթացների վարչարարության վերաբերյալ հարցումների իրականացմանը:

Կապը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների և ցուցանիշների հետ՝

16. Խաղաղություն, արդարություն և ամուր հաստատություններ, 16.7.2 Որոշումների կայացման գործընթացի ներառականությանն ու զգայունությանը հավատացող բնակչության համամասնությունը՝ Ըստ սեռի, տարիքի, հաշմանդամություն ունենալու հանգամանքի և բնակչության խմբի:

5. Գենդերային հավասարություն: 5.5.1. Ազգային խորհրդարաններում և տեղական կառավարման մարմիններում կանանց զբաղեցրած տեղերի համամասնությունը, 5.2.2 Ղեկավար պաշտոններ զբաղեցնող կանանց համամասնությունը:

2. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)

Միջոցառման անվանումը՝

11001- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության ապահովում և ընտրական ծրագրերի համակարգման, կազմակերպման, անցկացման, մոնիտորինգի ծառայություններ

11003- Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպում

11004- Ազգային ժողովի հերթական ընտրությունների կազմակերպում

11002- Ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպում

31002- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի շենքային պայմանների բարելավում

31004- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի տրանսպորտային միջոցներով ապահովվածության բարելավում

3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

3.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

1) <u>Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ:</u>

11001 - Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության ապահովում և ընտրական ծրագրերի համակարգման, կազմակերպման, անցկացման, մոնիտորինգի ծառայություններ

11003 - Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպում

11004 - Ազգային ժողովի հերթական ընտրությունների կազմակերպում

*2) **Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ:***

11002 - Ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպում

31002 - ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի շենքային պայմանների բարելավում

31004 - ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի տրանսպորտային միջոցներով ապահովվածության բարելավում

Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին դասվող միջոցառումները:

11002 - Ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպում

3.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

1. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների ճշգրտում՝

Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների ապահովման համար իրականացվում են վերլուծություններ, ուսումնասիրություններ, կազմակերպվում են Հանձնաժողովի անդամների և Հանձնաժողովի աշխատակիցների վերապատրաստումներ, անցկացվում են սեմինարներ, կոնֆերանսներ, ապահովվում են շփումներ շահագրգիռ մասնակիցների հետ (կուսակցությունների ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպություններ, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, տարածքային ընտրական հանձնաժողովներ և այլն): Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընտրական ծրագրերի համակարգման, նախապատրաստման, հաշվետվական համակարգի կազմակերպման, մոնիտորինգի ծառայությունների ապահովման նպատակով ներկայացրել է՝

1096 - Ընտրական գործընթացների համակարգում, կանոնակարգում և տեղեկատվության տրամադրում

11001- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության ապահովում և ընտրական ծրագրերի համակարգման, կազմակերպման, անցկացման, մոնիտորինգի ծառայություններ

2022թ.-ին այս միջոցառման մասով փաստացի ծախսեր կազմում է 401347.5 հազար դրամ:

2023թ.-ին այս միջոցառման մասով անհրաժեշտ հատկացումը կազմում է 457149.8 հազար դրամ:
2024թ.-ին անհրաժեշտ հատկացումը կազմում է 490826.6 հազար դրամ,
2025թ.-ին անհրաժեշտ հատկացումը կազմում է 493670.6 հազար դրամ,
2026թ.-ին անհրաժեշտ հատկացումը կազմում է 496861.6 հազար դրամ:

11003- Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպում

2022թ.-ին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման ծառայությունների ապահովման համար փաստացի ծախսերը կազմել է 524146.5 հազար դրամ:

2023թ. ընտրությունների կազմակերպման համար անհրաժեշտ հատկացումը կազմում է 75801.1 հազար դրամ:

2024թ. ընտրությունների կազմակերպման համար անհրաժեշտ հատկացումը կազմում է 75801.1 հազար դրամ:

2026թ. ընտրությունների կազմակերպման համար անհրաժեշտ հատկացումը կազմում է 2164265.2 հազար դրամ:

11004- Ազգային ժողովի հերթական ընտրությունների կազմակերպում

2026թ.-ի Ազգային ժողովի հերթական ընտրությունների կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման ծառայությունների ապահովման նպատակով նախնական հաշվարկներով անհրաժեշտ հատկացումը կազմում է 3473069.0 հազար դրամ:

11002- Ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպում

2022թ.-ին ընտրական հանձնաժողովների անդամների, անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացների կազմակերպման ծառայությունների ապահովման համար փաստացի ծախսերը կազմում է 11831,7 հազար դրամ:

2023թ. մասնագիտական դասընթացների կազմակերպման համար անհրաժեշտ հատկացումը կազմում է 58851.3 հազար դրամ:

2024թ. մասնագիտական դասընթացների կազմակերպման համար անհրաժեշտ հատկացումը կազմում է 58851.3 հազար դրամ:

2025թ. մասնագիտական դասընթացների կազմակերպման համար անհրաժեշտ հատկացումը կազմում է 58851.3 հազար դրամ:

2026թ. մասնագիտական դասընթացների կազմակերպման համար անհրաժեշտ հատկացումը կազմում է 58851.3 հազար դրամ:

3.3. Նոր նախաձեռնությունները

31002-- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի շենքային պայմանների բարելավում

Շենքային պայմանների բարելավում՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի, ինչպես նաև հիմնանորոգման, վերակառուցման, կառուցման աշխատանքների ձեռքբերում

2024թ. այս միջոցառման համար անհրաժեշտ հատկացումը հաշվարկվել է 463100.0 հազար դրամ:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի հետ փոխկապակցվածությունը, որը բխում է 4.6 կետի 22-րդ <<Աշխատանքներ են տարվելու՝ բացառելու հաշմանդամության հիմքով խտրականությունը կյանքի բոլոր ոլորտներում, ապահովվելու է հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ հաստատություններից դուրս անկախ կյանքի և համայնքում ներառվելու իրավունքի իրացումը>>: Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովը (ԿԸՀ) լինելով հանրային կառույց և կարևոր նշանակության օբյեկտ, հետամուտ է նախագծային հատուկ լուծումներով ապահովել շենքի մատչելիությունը:

Արդյունքում, ապահովելով ոչ միայն բովանդակային միջոցառումների իրականացումը, այլև համապատասխան միջավայրի ստեղծմանը, որտեղ հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքների խթանման և պաշտպանության ոլորտում իրականացվող միջոցառումներն ու ծրագրերը կապահովեն գործողությունների ամբողջականությունը՝ ապահովելով հաշմանդամություն ունեցող անձանց իիրավունքների պաշտպանությունը և խթանել նրանց լիիրավ մասնակցությունը երկրի քաղաքական կյանքին:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի վարչական շենքի վերակառուցման համար անհրաժեշտ խոշորացված ծախսերի հաշվարկում, անհրաժեշտ է նախագծանախահաշվային փուլում հաշվի առնել՝ շենքի մատչելիությունն ապահովող միջոցառումներ՝ նախագծային հատուկ լուծումներով:

Կից ներկայացվում է՝ ՀՀ ԿԸՀ վարչական շենքի վերակառուցման համար անհրաժեշտ խոշորացված ծախսերի հաշվարկը համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 21.02.2023թ.-ի N01/14.1/2095/2023 գրության:

31004- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի տրանսպորտային միջոցներով ապահովվածության բարելավում

-ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կարիքների համար ավտոմեքենաների ձեռքբերում

ԿԸՀ հաշվեկշռում հաշվառված չորս ծառայողական ավտոմեքենաները գտնվում են մաշված և անմխիթար վիճակում, քանի որ դրանք ձեռք են բերվել 2007թ., 2012թ.և 2013թ.-- ին: Նրանց շահագործման և վերանորոգման աշխատանքների համար ավելի շատ գումար է ծախսվում: ՈՒնենում ենք դժվարություններ ՀՀ տարածքով հաճախակի իրականցվող գործուղումների ընթացքում: Նոր ավտոմեքենաների ձեռք բերումը ավելի արդյունավետ կդարձնի ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատանքները:

Նախատեսվում է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կարիքների համար ձեռք բերել երկու ավտոմեքենա, որի համար

2024թ. այս միջոցառման համար անհրաժեշտ հատկացումը հաշվարկվել և ներկայցվել է 24000.0 հազար դրամ:

8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ընդամենը հայտով ներկայացված ընդհանուր ծախսերը՝

գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գնահատում 2024-2026 թթ. ՄԺԾԾ համար՝

2024թ կազմում է 557258.0 հազար դրամ:
2025թ կազմում է 552521.9 հազար դրամ:
2026թ կազմում է 6193047.1 հազար դրամ:

Նոր նախաձեռնությունների գծով ընդհանուր ծախսերը՝

2024թ կազմում է 487100.0 հազար դրամ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ներկայացվում է՝

Հավելված 1
Հավելված 2
Հավելված 3
Հավելված 3/1.2
Հավելված 3/3
Հավելված 3/4
Հավելված 4
Հավելված 5
Հավելված 8